



# ՇՄԱԲ

ՔԱՌԱՅՈՒՄԻ ԱՎՐՈՒԹԻՒՆ  
Պուշկարիոյ համար  
Տարեկան 12 Ֆր.  
Վեցամսեայ 6 "

Արևմտահայկանի հա-  
մար Տարեկան 15 "  
Վեցամսեայ 8 "

Ամերիկայի համար  
Տարեկան 3 Ժր.  
Վեցամսեայ 1.50 "  
ԿԱՆԻՍԻՆՎԱՆԻՒՆԻ

Մանուգրական տպարան  
Երևանի համար 40 սանթրիմ  
Կ. իսկ վերջին երեսի հա-  
մար 20 սանթրիմ Կ. երեսին  
սակի սակազմներու համար  
20 Օլլ զեղը կըլլայ :

Վառանայի համար ձեռքի 10 սանթրիմ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՅՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՔԱԹ ՈՐԵՐԸ

Վառանայի և Գրական  
Խմբագրություններու համար  
—  
Редакция на вестникъ  
«Шаржумъ»  
Варна  
Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)  
Վառանայի և Գրական  
Խմբագրություններու համար  
—  
Պուշկարիոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹՐԻՄ )

## ԱՐԵՎԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Իւսքիւ պէն կիմացնեն որ, ինովի  
Պուշկարի և Քոսովայի խոսովու-  
թեանց առթիւ տարածուած լու-  
րերը անհիշմ են : Բոլոր իրագու-  
թիւնը այն էր որ, ինովի Պուշկարի  
գայմագամ Քեամիլ պէյի պաշ-  
տօնանկութիւնը Քոսովայի վա-  
լիին կողմէ, ժողովրդին դժգո-  
հութեան առիթ տուած էր :

Վերին իշխանութիւնը ժողու-  
վրդին այս դժգոհութեան և բո-  
ղոքներուն օրինատորութիւնը մ-  
բանելով, հազիւ չորս օր ետքը  
Քեամիլ պէյը կրկին իր պաշտօ-  
նին մէջ վերահաստատեալ է :  
Ահա այսչափ են եղեր Հին Սեր-  
պիոյ Ալպանացիներու կարծեց-  
եալ շարագործութիւնները : Սիւսի  
կիտի ըլլայ եղեր այս դէպքե-  
րուն վերագրել Համաի փաշայի  
ճամբորդութիւնը Սերպիոյ, Ռու-  
սիոյ հիւպատոսներուն և մէկ  
քանի ուրիշ անձերու բնկերակ-  
ցութեամբ, դէպի Պրանսքա-Պոլս  
և Սերպիա, նմանապէս այս դէպ-  
քերուն առթիւ չէր որ անգլիա-  
կան փոխ հիւպատոս Փոնթանա,  
աւստրո-հունգարական հիւպատոս  
Փարա և արեւելեան երկաթու-  
ղիներու երկրաչափ Յինաձէր  
Փրիշիին գացին Սուլթան Սու-  
րատի գերեզմանը այցելելու :

Այս հերքումներէն կը հաս-  
կցուի որ, թուրք պաշտօնական  
չըջանակներու մէջ եւրոպական  
հասարակութիւնը պահանջներու  
և խաղաղութեան տիրապետումը  
ազգաբարելու ճիգ մը գոյութիւն  
ունի : Իրաւ է որ, այս միջոցիս,  
նոյն գաւառին մէջ բնակչութեան  
տրամագրութիւնները թուլցած  
են քիչ մը : այն փութկոտու-  
թիւնը որով Բ. Գուրը սճապա-  
քեց զսհացում տալ տեղացի  
բնակչութեան, ժողովրդին յու-  
զումը հանգարտեցուց : Բայց,  
այս առթիւ, օտմաննան իշխա-  
նութեանց տկարութիւնը անգամ  
մըն ալ երեւան եկաւ, ինչ որ  
յաւիտեան մտահոգութիւն պիտի  
պատճառէ Եւրոպայի :

Ինչ որ ալ ըսուի, Պալքանեան  
ցամաքակղզւոյն թրքական նա-

հանգներուն վիճակը խաղաղու-  
թեան բոլոր բարեկամները ան-  
հանգստացնելու բնոյթն ունի :  
Ամբողջ Մակեդոնիան յուզումի  
մէջ է :

Միչեւ հիմայ, Ռուսիա այս  
յուզումը իրբեւ յեղափոխական  
ախտանիշը կը նկատէր և թուր-  
քիոյ այն տեսակ խորհուրդներ  
կը ներշնչէր, որոնք կարմիր Գա-  
զանին ձեռքը քարոյ պլանչ կու-  
տային : Աւելի մօտէն տեղեկա-  
նալով իրաց վիճակին, Ռուսիա  
խորհեցաւ և Սուլթանին ուշա-  
դուրսութիւնը հրաւիրեց խոր ու  
անկողմնակալ քննութեան մը և  
կազմական բարեկարգումներու  
ներմուծումին անհրաժեշտու-  
թեան վրայ :

Եւրոպա, կամայակամայ, նեղը  
մնացած պիտի ստիպուի, ուշ  
կամ կանուխ իջնու թէ պուլկա-  
րական վստրագութեանց կամ  
հայկական շարժերու արիւնալի  
կրկնումը չի պատահած—ճանչ-  
նալ թէ՛ այս խնդրին ուրիշ լու-  
ծում չի կայ, բացի Պերլինի դաշ-  
նագրին տրամագրութեանց ան-  
կեղծ և հաստատ գործադրու-  
թենէն :

Այս է Արեւելեան խնդրին ա-  
ռաջին և վերջին գիրը, այնպէս  
ինչպէս որ կը ներկայանայ 1901  
թուականին՝ քաղաքակիրթ աշ-  
խարհին և դիւանագիտութեան  
մը առջեւ՝ որ դիտակցութիւնն  
ունի իր պարտականութեանց  
դէպի տիպեղական խաղաղու-  
թիւնը և մարդկային ազգին շա-  
հերը :

### ԻՆՉՊՈՒՆ Ի ՅԱՏԱՅ ԿՈՒԳՅՑ ՃՇՄԱՐԻՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

(Շար. ևսխորդ քիւն և վերջ)  
Հումի մէջ անգամ մը ան-  
գունդ մը բացուեցաւ : ասիկա  
հոռոմայեցուց աստուածներուն  
կողմէ տրուած նշան մը թուե-  
ցաւ : որ հայրենիքի վերահաս-  
տանգ մը կը պուշակէր : «Ասա-  
նածները զոհ պիտի պահանջեն  
սկսան ազգակիլ բուրմերը որ-  
պէս զի արկածը հեռացնեն» Իս-

կոյն երեւան եկաւ Գուրաիա՝  
փայլուն համազգեստով, և ինք-  
զինքը ժողովրդին աչքին առջեւ  
անգունդին մէջ գահավիժեց :  
Թէեւ շերմեռանդ նախապաշա-  
րուժը առաջ բերաւ այս վեհանձ-  
նութիւնը, բայց միշտ մարդը  
պէտք է գտնուի իր հատարին ու  
համոզումին համեմատ Ո՞վ կրնայ  
սքանչացո մ և մեծարանք չըն-  
ծայել այն տիպար հոռոմայեցիին :

Մուրաբնի ճակատամարտին  
մէջ, որ Զուրիցերիոյ ազատու-  
թեան յաղթանակը ապահովեց,  
թշնամիները իրենց նիզակներով  
անթափանցելի պարիսպ մը կազ-  
մեցին և զուրիցերական բանակը  
վայրկեան մը կորսուած թուե-  
ցաւ : նոյն պահուն յառաջ նետ-  
ուեցաւ Արնոլտ—ո՞վ չի ճանչ-  
նար քաջ դիւցազնը—«ես ճամբայ  
կը բանամ, կիւն ու զաւակներս  
հոգացէք», այս խօսքերով նի-  
զակներու խորձ մը յափշտակեց  
ու գետին միւսը : Իր դիտկին  
վրայէն Զուրիցերիացիք բաց-  
ուածքը կտրեցին և թշնամին  
զարկին, մինչդեռ Անոլտ հայ-  
րենիքի համար գեղեցիկ մահով  
մեռաւ :

Մանգինէի ճակատամարտին  
մէջ Երամինոնտա մահացու կեր-  
պով վիրաւորուեցաւ : Քիչ ա-  
տենէն իրեն լուր տուին որ թըշ-  
նամիները իրոյս կուտան : ասոր  
վրայ ծիծաղելով բացաբանչեց .  
«Իրարեկամներ, ուրեմն ուրախ կը  
մնանիմ, հայրենիքը յաղթեց» :  
Այս խօսքերով նետը աղիքնե-  
րէն գուրս քաշեց ու հողին  
փչեց :

Երբ մարդ հայրենիքի սէրէն  
մզուած՝ ամբողջ ազգին բարե-  
լատութիւնը աչքի առջեւ ունե-  
նալով՝ զուպէ իր կիրքը ու յաղ-  
թանակէ իր ետասիրական ցան-  
կութիւններուն, այն առեւն արիւնը  
թափող դիւցազնի մը շափ սի-  
րելի և մեծ է : Փառասիրութիւնը,  
ոսկին, բարկութիւնը և աստիւ-  
թիւնը յաճախ մարդս անարգար  
և ամօթահար արարքներու կը  
մղեն, և այս կիրքերն են որ  
անհամար քաղաքներ և երկիր-  
ներ կործանման անգունդը բե-  
րած հասցուցած են : Անիբալ,

այն նշանաւոր դիւցազնը, կար-  
գազինէն փառքի գագաթնակէ-  
տը հասցուց : սակայն իր հա-  
կառակորդին նախանձը անոր  
կործանումը երգուած էր, ու  
հայրենիքի ձայնը ստիպուած էր  
լուել : Անիբալ տապալեցաւ,  
բայց իրեն հետ ինկաւ նաեւ  
կարգէզոնը :

Որչափ գեղեցկօրէն կը փայ-  
լին, նման դաւաճանութեանց  
հանդէպ, Արիստիտէս մը կամ Գե-  
միստոկլէս մը : Երկուքն ալ կծու  
թշնամութեամբ կապրէին : Ա-  
թէնք վտանգի ենթարկուեցաւ, և  
ահա Արիստիտէս իր մահացու  
թշնամին ներողութեան ձեռք  
երկնցուց : Երկուքն ալ իրենց  
բարբոքեալ ատելութիւնը զոհե-  
ցին և հայրենիքը ազատեցաւ :

Երանի՛ այն երկրին, որ իր  
մէջ շատ մը ազնիւ, հայրենա-  
սէր սրտեր կը պարունակէ : Պա-  
հենք մեր սրտերուն մէջ դրա-  
գէտի մը սա խօսքերը . «Հայ-  
րենիքիդ, սիրելի հայրենիքիդ  
փարէ, զայն ամբողջ սրտով ա-  
մուր բունէ» :

Գերմ. Թարգմ. ԲԱԶՈՒԿ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՐԷՆ, 10 Յունիս  
Յաւալի պարագայ մըն է սա  
երողութիւնը թէ՛ թղթակիցները  
շատ անգամ ստիպուած կըլլան  
գրիչ ձեռք առնել թերթերու  
հաղորդած անճիշտ տեղեկու-  
թիւնները հերքելու համար :  
Ոեւէ առիթով հրատարակ գա-  
լու բնաւ տրամագիր չըլլալով  
հանգերձ, այսօր կը ստիպուիմ  
գրիչ ձեռք առնել «Երաժուտի  
321 թուով Արիստիտէսի տուած  
մէկ քանի տեղեկութեանց ան-  
ճիշտ տեղերը շտկելու համար :  
Այն նամակը զոր Պ. Արիստիտէ-  
սի իւր ընթերցարանի ստժամ-  
եայ վարչութեան քարտուղար  
ստորագրած էր, լսկ իր անձնա-  
կան մէկ գրութիւնն է, վարչու-  
թեան միւս վեց անգամները բնաւ  
տեղեկութիւն չունէին այդ տե-  
սակ գրութեանէ մը : Գրիթէլ ըն-  
թերցարանին շատ մը գործերուն

մէջ յիշեալ պարունը նոյն ընթացքը բռնած է և այդ պատճառաւ ընթերցարանին գործառնութեանց անկանոնութեան պատճառաւ դարձած է :

Պ. Արիս Լազար կը կարծէ զիտնալ թէ ընթերցարանին նախաձեռնարկ պարունները ժողովուրդին համակրութիւնը վայելելէ զուրկ էին . բացատրութիւն մը որ, միայն այս ու այն անձը վարկաբեկ ընելու կը ծառայէ :

Պ. Արիս Լազար այդ տողերը գրած ատեն գոնէ չի յիշե՞ց իրեն յանձնուած նախկին կանոնադրին այն մասնաւոր յօդուածը՝ ուր կը սուր թէ՛ «30 հիմնարկի անդամներ պատասխանատու կը մնան նորահաստաւ ընթերցարանին գոյութեան» : Այդ 30 անդամներէն շատերը արդէն այսօրուան ընթերցարանի վարչութեան ալ անդամներ կը մնան . եւ, եթէ Պ. Արիս Լազար և իր մէկ երկու ընկերները ցրտութեամբ չի վերաբերուին, ընթերցարանը աւելի առաջ պիտի երթայ ապահովագրէ :

Պ. Խ. Մանուկեանի անունը խեղաթիւրուած է, և անշուշտ Պարոն Եանիբեր ցմիշտ պատասխանատու է ատոր համար . . . Սակայն, Պարոն Խ. Մանուկեան միայն ի՞նչք իր զբաղանքէն ամբողջացուցած է պակաս զբաղանքը, թէ ոչ ուրիշներ ալ, առիկա Պ. Լազար մենէ ալէկ գիտէ : Թո՛ղ որ Պ. Մանուկեանի և իր համախոհ Գեորգ Վասպուրականցիին արարքները վարչութեան անդամ ընտրուելու համար, և ընկերութեան մէջ կատարած ոտնձգութիւններն հասկցուցին մեղի թէ՛ ինչո՞ւ համար Պ. Մանուկեան

այնքան եռանդ ցոյց կուտայ եւ զեր ընթերցարանին համար :

Պարագայ մը որ կը փափուքինք գիտնալ այն է թէ՛ Պ. քարտուղարը ինչպէ՞ս առանց առժամեայ վարչութեան անդամներուն հաւանութեան շարագրեց այդ հերքման գիրը և զայն պաշտօնագրէս վաւերացուց միայն քարտուղարի ստորագրութեամբ :

Գալով Պ. Վասպուրականցիին, այս մարդը կուսակցութեան վարչութեան վեց անդամներուն համոզումը իրեն նկատմամբ, որով կը խորհուր ընթերցարանի ապագայ հսկող վարչութեանէն հեռացնել զայն, անաղիւ ու անկիրթ ոտնձգութեամբ՝ յաջողեցաւ ընթերցարանի վարչութեան մէջ մնալ ցարկ, իր երկու պաշտպան աշակիցներուն շնորհիւ : Սակայն վստահ ըլլալով նորընտիր վարչանդամներուն անկողմնակալութեան վրայ, յուսալի է որ յիշեալ Պ. Գեորգը իսպառ կը հեռացուի ընթերցարանին սեմէն, քանի որ ան ելած է այս բոլոր ատելութեանց պատճառը :

Հոս արձանագրած անկողմնակալ իրականութեանց իսկական պատասխանատու մնալով, պարտաւորուած անունով ստորագրել, սրպէս զի այլեւայլ տարաձայնութեանց տեղի չի մնայ :

Խ. ՏՕՒԱՊԵԱՆ

ՆՍՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պարտումս 326 թիւին մէջ Տիկ. Փերոնէ Ա. Թամիրեանց՝ անուան ղէմ նետած է քանի մը տողեր ուր, ի մէջ այլոց, եւրոպական քաղաքավարութեան դասեր ալ կուտայ ինձ, ծիծաղա-

չարժ յաւակնութեամբ մը որով առ առաւելն ուրիշներու արգահատանքը կրնայ հրաւիրել իր անձին վրայ :

Ինչպէս կերելի, Տիկինը, երկու ամիսէն, բառ առ բառ գրի առնել տուեր է այն խօսքերը զորս իրմէ առաջ քանի մը հոգիներ տարտղնած են հոս, և որոնց շուքեցի ես որ և է ձեռով պատասխանել՝ քանի որ երբեք պարտական չեմ զգար ինքզինքս ու շարքութիւն դարձնել անկիւնախօս ճարտասաններու իմաստալիցութեան վրայ :

Քւ հիմա եթէ երկու խօսք կը նեմ, պատճառն այն է որ իր անունով, մակնունով ինձ դէմ կելնէ Տիկինը. հոգ չէ, եթէ նոյն իսկ ուրիշի մը գրածին տակ ստորագրած ըլլայ :

Կարգաւ պատասխանեմ :

Ա. Տիկինին վկայութեամբ ես առիթը չեմ փախցնել արդուութեան և այլ բարձր նիւթերու վրայ ճառաբանելու : Բայց ի՞նչպէս հասկցեր է զիս, ո՞ւր մտիկ ըրեր է իմ ճառերս : Տիկինը անշուշտ իր վկայութիւնները հիմնած է ստացական տեղեկութիւններու և ինձի գեռ անյայտ տպաւորութիւններու վրայ . . . Այո՛, աղիւ Տիկին, թէպէտեւ չեմ կրնար ունկնդիրներս մաքնիսացնել, սակայն առիթը ներկայացած ատեն կը խօսիմ. մանաւանդ՝ եթէ . . . խօսք սուսած ըլլամ զիս հրաւիրողներուն :

Բ. Տիկինը կը յայտարարէ թէ «Շահրիմանի յայտարարութիւնը բացարձակագրէս սուտ է» : Բայց իրողութիւնները հակառակը կը հստատեն ղ ժբաղդաբար :

— Երեկոյթին գիշերը պաշ-

տօնապէս խօսելու հրաւիրուած էի, և ժամը Յին Տ. Յարութիւն Փաղարճագեանի հետ զացի հանդիսավայրը, ուր կարգադիր յանձնախմբի և երգեցիկ խումբերու անդամները ԵՌԱՋԻՆ, ԼՆԳԱՄ պատմեցին մեզ, թէ «դաշնակահար Տիկինը, կէս ժամ առաջ երբ զինքը կանչելու գացած են, մերժած է երեկոյթին մասնակցել, եւ այլն» :

Անհաւատալի, անկարելի թուեցաւ ինձ լուրն ու ղէպըր : Ու զեցի ստուգել ո՞ր թիրիմացութիւն մը չի կենայ, ամէնքն ալ պնդեցին, թէ մինչեւ վերջ յուսադրած, խոստացած է, և կէս ժամ առաջ միայն մերժած :

Տեսայ որ ամէնքը յանկարծակիի եկել էին և կը խորհէին գիշերանց մէկը գանել՝ ամէն խանգարումի առաջքն առնելու համար :

Անհրաժեշտ էր հանդիսականներուն իմացնել ծրագրի խանգարման պատճառը. ու ես ըսի, ինչ որ կարելի էր ըսել ծայրագոյն փափկանկատութեամբ, կարգադիր յանձնախմբի և երգեցիկ խումբերու վկայութեանը վստահած :

15 - 20 հոգի սո՞ւտ խօսեցան մեզի, խաբեցին զիս, և ի՞նչ յանդգնութեամբ խնդրեցին որ հանդիսականներուն յայտարարեմ : Անկարելի բան է սոս. եւ սակայն, ինչ ալ ըլլայ, Տիկինը կը տեսնէ որ ամէն պարագայի տակ սուտ խօսողը ես չեմ : Կամ ինքն է, և կամ 20 հոգիներն են, որոնք դարձեալ պնդեցին ինձ և հրապարակաւ ալ պիտի հաստատեն, թէ «բացարձակ սուտ» Տի. Թամիրեանցի գրածներն են :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿՐԻՂՃԱՆ ՈՉ ԿՐ ՍԻՒՆ

VII

(Շար. նախորդ քիւնէ)

— Երբեք, երբեք ատ չի պիտի ընեմ— ինքնիրեն կըսէր : Արարքս ոչ անպատիւ եւ ոչ ալ անտեղի կը զբտնեմ : Յիմարութիւն է շան պէս նօթութեան մեռնիլը, քանի որ աս միջոցով ատեն մը կը փրկուիմ . . . գիտեմ, ես ալ բան մըն եմ, բանով մը օգտակար կրնամ ըլլալ, ողորմութիւն չեմ ուզեր . . . և ոչ ալ կը գողնամ որ ամչնամ : Գրածս կը ծախեմ, ինչպէս որ ուրիշը իր կտաւը կը ծախէ եւ գործաւորն ալ իր աշխատութիւնը . . . կը յիշէր որ քանի մը օր առաջ, սրճարարանի մը մէջ, քանի մը երիտասարդներ գոված ու գնահատած էին իր քերթուածները— որ իրեն համար անպատում հրճուանք մը կը պատճառէր— իսկ հարուստ պուլ-

կար Բ. իրեն հարցուցեր էր թէ ո՞ւր տեղէն կրնար անոր գրուածները գնել, և շատ քաղաքավարութեամբ վարուած էր իրեն հետ : Ստուած իմ, որչա՞փ մարդիկ կան որ բանաստեղծութիւնն ու գեղարուեստը կը գնահատեն . . . կան նաեւ հայրենասէրներ . . . և շատ հարուստներ . . . Ի՞նչ կը պակսի իրենցմէ՞ եթէ Պուլկարի մը գրքի համար ֆրանք մը տան : Ատիկա չի պիտի կործանէ զիրենք : Ատոնք առաւօտները քաֆէ-քարուցիներ խմելու համար միայն ֆրանք մը կը վճարեն, մինչդեռ ինք աս ֆրանքով չորս օր կրնար ապրիլ : մինչեւ իսկ շարքի մը, վերջապէս պուլկարական գիրք է, նոր՝ կը գոչէր . . . Ինչո՞ւ չի գնեն : Իրաւ որ պուլը եմ եղեր, ինչո՞ւ կամչնամ : Գողնալու աւելի լա՞ւ է : Աս խորհրդածութիւններով սրտապիղուած Պրըշքով ղէպի քաղաք կերթար :

Բայց ինքզինքը կը խաբէր : Ներսէն ուրիշ ձայն մը— ստորնացած հպարտութեան ու անձնասիրութեան ձայնը ուրիշ կերպ կը պատասխանէր : Ան առանց խոստովանիլ ուզելու կը զգար, որ ամբողջ շահատակութիւն մը կընէ, թէ աս ստորնութիւն է, թէ ատի կատարեալ ողորմութիւն մըն է իր գրքին փոխարէնը տրուած,

որ ոչ սքին պէտք է : Աչքի առջեւ ըրեալ այն հեղահամբոյր, ցաւակցող կամ արհամարհական նայուածքը, որ իրեն փրկիչը պիտի ըլլար, պաղքատինք մը իր ճակատը ողողեց :

Նոյն վայրկեանին գողութիւն ընելը իրեն սուղի նախամեծար երեւցաւ :

Բայց միթէ գողնալու վա՞րժ է :

Այսու հանդերձ, ուրիշ երրորդ ձայն մը, սոսկալի, զօրաւոր ու կատաղի իրեն կը պոսար : Այդ ալ անօթութեան ձայնն էր, որ ոչ իրաւունքը մտիկ կընէ և ոչ ալ տրամաբանութեան կը հասկնայ :

Պրըշքով ճակատը կնճռոտեց, անախորժ կերպով բերանը ծամածոցեց, մոլեգնութեամբ քամակը քրից, քիչ մը մտածեց, ղեղնած, գողահար ու այլախորուած, իր ակոսներու մէջէն անտրոշ, խուլ ու սեղմուած ձայն մը ձգեց :

Ու քալեց առաջ :

Շուտ մը քաղաքային պալատէզին քովէն անցաւ, որ հիմակ տխուր, սերեւակալի և ամայի էր. անցաւ քանի մը նեղ փողոցներէ, ուր երթեւեկութեանը կաւեղնար, խանութներու, գինեատուններու, պանդոկներու քովէն անցաւ, ստանց անոնց դառնալու ու նայելու ու առանց բան մը

տեսնելու, փողոց ելաւ, ուր վաճառականներու մթերանոցներ կային :

Հրապարակին վրայ արդէն մեծ շարժում կը սիրէր : Տուրտին բոլոր սաստիկութեան հակառակ, քաղաքին աս մտքը, առեւտուրի շահ ակնկալութեանէն կենդանացած էր : Պրըշքով զգալաբար այս ու այն կողմ կը դառնար, հարուստներէն մէկ քանին տեսնելու յոյսով : Բայց իր նայուածքը կը մթննար, սրունքները կը ծալուէին եւ ճակատը նորէն քրտինքով թրջուեցաւ : Մէկը կը փնտռէր, բայց իր հոգիին խորեղէն կը բաղձար աս սոսկալի բարեբարին չի հանդիպիլ : Եւ պատահմամբ, կամ ալ հոգեկան խռովութեանէն, երկար ատեն աչքերը պտտուեց ու մէկն ալ չի ձանչցաւ : Իր նայուածքին հանդիպած բոլոր ղէմքերը, իրեն օտար ու չափազանց գէշ կերեւալին : Ան տեսնէ, կարծես, մեծ լեռ մը կուսակէն վար կնկաւ : Իր անօթութիւնը կորսուեցաւ, և սոսկալի երագէ ազատուածի պէս, շուշ առաւ :

— Աւելի լաւ, բաւ ինքնիրեն, ու շուտ մը ես դարձաւ :

Իսկոյն հարուստ Բ. իր զիմացը ելաւ . . . ան որ առաջ իրեն այնչափ համակրութիւն յայտնած էր : Պրըշքով սարսափ : վայրկեան մը ան-

Գ. Ըստ . . . եւրոպական քաղաքավարութեան, անհրաժեշտ է եղեր Տիկնոջ անունն ու մականունը տալ . . .

Գուք կը կարծէք որ երբ մէկը առանց վարձատրութեան խոստում մը կը ընէ, ազատ է իր քմահաճոյքին համաձայն զործադրել կամ ոչ . . .

Վահան Եսեփիսեան  
Ֆիլիպս, 17 Յունիս

ԱՊԱԳԱՅ ԳՐԲԻ ՍԸ ՌԷՔԼԱՍԸ

Հանրածանօթ շվալիէ s'իւնստիւրի մը . . . որ Պոլսոյ մէջ իր ազմակայաց առաւփախառնութիւններուն վրայ մտապահութիւն քողը քաշելու համար կոտորածները պատրուակ բռնելով արտասահման խոյս առած էր . . .

Վճռականութեան մէջ միտց, փախուստ տալու պատրաստուելով . . . յետոյ ռաբոլը զարնելով, մրմնաց «թո՛ղ կատարուի» . . .

Եւ իր գրուածքներէն օրինակ մը գատելով, շիտակ հարուստին գիմացը կ'աւ . . .

Հարուստ Բէն ընտիր շուպա մը հագած, զազխոսի մը սեմին վրայ կոխած էր, բայց Պրըչքովը նշմարելով, որ իր կողմէն կուգար ուղղակի, կեցաւ . . .

Պրըչքով մտեցաւ, բարեւեց առանց գլխարկը հանելու ու գողցող ձայնով մը կ'մկմաց, դատարանի առաջ ելլող մարդու մը պէս . . .

Պարոն, գրածներէս գիրք մը ձեզի բերի . . . գրեւէք . . . որովհետեւ փափաքեցաք . . . ես այ . . .

Խօսքը կ'իստա մտայ . . .

Բէն ձեռքը կրկնեց ու գիրքը առաւ : Առաջ քա՛ ի մը տեղը բացաւ, յետոյ սքջի կրկնը նայեցաւ եւ երկարօրէն անոր վերնապիւր գիտեց, ուշադրութեամբ կտտի կրկնն ալ գիտեց եւ քանի մը անգամ ալ հազար : Յետոյ ըսաւ . . .

— Հը՛, հը՛, ա՛ն է ձեր գրքոյդը . . .

— Այո՛ . . .

Բէն նորէն գրքի դուրսի կրկնները գիտեց, բան մը կարգաց, գիրքը

ած իրող սափրիչը, անկիւնի նպարավաճառը, անցելոյն մէջ իր հոտած պոռոտախօսութիւնները ունկնդրելու հարկադրուած խեղճ ազաքներ, եւ կամ անցորդներ որոնց կը մտտնայ եւ որոնց հետ խօսքի կը բռնուի անորակելի լրբութեամբ մը . . .

Մեր ինկած շվալիէն, իր կոկորդիլոսի լայնափեռով շուրթերը ապուշ ու անկարող վրիժառութեան մը ցանկացումէն հանգրիճած ու կրկնող իր շնատախտակներու ներսած կոտորած շարքին աւերակը, կը պարծենայ եղեր թէ գիրք մը պատրաստելու վրայ է, որուն մէջ պիտի հանդիսանայ բոլոր այն արկարկները, որոնց հանդիպած է ինք արտասահմանի մէջ, եւ որոնք տապարի հարուածը տուին իր օգտաշատ ! գործունէութեան, պիտի պատէ գիմակաները բոլոր խաչագողներուն, կեղծ յեղափոխականներուն, զորս տեսած է իր փառաբարութի ճամբուն վրայ ! ! ! վերջապէս հայ ազգը, «Իր» միջոցաւ, պիտի լուսաւորուի հանդէպ իր այն զուակններուն որոնցմէ փրկութիւն կը յուսայ եւ որոնք սակայն չարաչար կը խարեն եղեր գիւնքը ! ! !

Ինչպէս կ'երեւայ, ծանօթ Շվալիէին գրչի այս ապագայ վիճակը՝ ոչ միայն ազգային փրկագործութեան սատարներէն մէկը պիտի ըլլայ, այլ եւ պիտի հանդիսանայ հայ գրականութեան ամենէն խկատիպ գործերէն մէկը ! ! !

Գրէ՛, խաղիչդ՝ ուրեմն, խեղճ ինկած շվալիէ, սողունի գունդ միտքէ՛ քու թունաւոր էութեանդ քարշոթիւններով յուրթի ազաւկոյտին մէջ . . . հոգիիդ գաղանային գոհացումին սնունդը հոն փնտոէ գտիր, անոր նիւտոյ գէղերը քրքրէ՛, աւկնու վրայ ըրէ՛ նիւթ ու հիւթ հասցնելու համար այն գրքին զոր փոխելու տապովը կ'այրիս ձանկոտէ՛ շոր ու ցամաքը զղիղից ամուլ խաւերը, ունայնօրէն կ'արկ կ'ացնի՞ց անոնց՝ այն խելագար կատարութեամբ որով քար կը զարնես մարդոց գիտուն : Եւ անպատճառ բան մը ցափոտելու պի-

Պրըչքովին դարձուց, եւ ձեռքերը շփելով, որ նա ն էր պաղած ըլլալուն, ըսաւ . . .

— Պարոն Պրըչքով, լ'ու, լաւ . . . ես մեր էլէնքային պիտի հարցնեմ առած չըլլայ : Եթէ չէ, յետոյ հաս մը կ'առնեմ, Ժպիտով մը բարեւեց եւ գաղիւնն մտաւ . . .

Պրըչքով քարացած մտայ . . . Աշխարհը շուրջը դարձաւ եւ աշքերը միմնացան : Գանի մը անցորդներ կոչուութեամբ զայն հրեցին . . .

ան մէկի քաշուած մայրիկն վրայ կրկնուար : Անգամ մը նայեցաւ իր քերթուածներուն, որուն մէջ իր հոգին գրած էր եւ որուն վրայ այնչափ անքուն գիշերներով հսկած էր, եւ որուն հետ կ'ապած էր իր գոյութիւնը : Ան իրեն շատ ուղորմելի, չնչին . . . անպէտք երեւց է, եւ ինքզինքն ալ զգաց նոյնչափ փոքրօրի, նոյնչափ ծիծաղելի . . .

Իր անձնատիրութիւնը՝ վրիւստ ու անգազանի պէս ապաստարեցաւ : Կուրծքին մէջ բան մը խաթարուցաւ եւ կրկնը գեղնեցաւ . . .

Գիրքերը ցամառի գետինը պարտեց, եւ քաղեց . . .

Լնդալարար գէպի Դանուրի ճամբան բռնեց . . .

Երբ որ կ'երկրէր հասաւ անվճար

ւային թապալուքներու մէջ, վրէժ լուծելու ապարդիւն մկնակունքներու մէջ, քրտնաթոր հե ի հե, հոգեպատ . . . ինկի՛ր աւելի վար, աւելի ցած, բարոյական ոչնչացումներուն էն խաւարչախ խորխորատին մէջ, խեղճ թշուառակա՛ն շվալիէ :

Ե. Ս.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պուրկազէն 51 ստորագրութեամբ հանրագրութիւն մը ստացած ենք որով ստորագրողները կը բողոքեն «Հնչակ»ի վերջին թիւին մէջ իրենց ցած զբալարութեանց գէ՛մ, քանի մը պատուաւոր անձերու մասին եւ կը յայտնեն թէ անոնցմէ շատերը իրենց ծանօթ ըլլալով երեւք չեն ներկայացներ այն տեսակ անցեալ մը, ինչպէս կը ջանայ ցոյց տալ օրկան եղող այդ թերթը : Ստորագրողները նաեւ ցաւ կը յայտնեն որ, կուսակցութեան այդ թերթը իրեն բան գործ ըրեր է զանազան անհատներ մրտտելու արհեստը, որով իր վարկը կը ստորնացնէ եւ ամենուն արհամարհանքին կարծանանայ . . .

— Պուրկազէն կը գրեն որ տեղւոյն կոչակար ազգայիններուն մէջ, ձեռքը Դարգիճեան անձը իր բռնած անխիղճ ընթացքով՝ ամբողջ գաղթականութեան ատելի գարձած է : Այս մարդը գործաւորները չարաչար աշխատեցնել է տար, անոնց իրաւունքները կամ ընաւ շի տար եւ կամ չափէն աւելի զեղջող կուտայ եղեր : Ո՛վ որ այդ մարդուն քով աշխատեց է, գեւ մինչեւ այսօր դրամակոտն պահանջք ունի եղեր իրմէ : Նամակագիրը կը

կանու թեամբ կանգ առաւ . . . շուրթած էր :

Մուր վետին վրայ ահագին սառչի բեկորներ կը լողային, եւ եզերքներն ալ սառ կ'ապած էին : Դիմացը՝ պուրկարկան ափը, ձիւնով ծածկուած, անժպիտ ու սպող կը նայէր : Հոն՝ ընտելեան մէջ մտայ Պրըչքովի հոգիին մէջ . . .

Յանկարծ ձայն մը զինքը իր մտայ խոհերու վերացումէն արթնցուց . . .

Ետին դարձաւ եւ վրատիքովը նըմարեց . . .

— Է՛, Պրըչքով, ի՞նչ կը փնտոես հոս : Չըլլայ թէ Թուրքիան յեղափոխել ուզես : Չուարթութեամբ գոչեց ուսուցիչը եւ ձեռքէն բռնեց . . .

— Աստուած իմ, ի՞նչ պատահեց է քեզի՛, աւելցուց . . . երբ Պրըչքովի ստեղծելի գեղունութիւնը նկատեց . . .

Պրըչքով զայն անայլալ ու սպող նայուածքով մը գիմաւորեց ու բան մը ըրաւ . . .

— Բայց դուն ցուրտէն փառցեր ես, սպիտ կ'ուր, նայինք մեր սիրելի բանաստեղծ ինչե՛ր է քաշեր, առ խօսքերով վրատիքով քաշեց տալու Պրըչքովը մտախօյ սրճարան մը . . .

Երբ որ Պրըչքով թէ՛ մը խեց ու

զգուշացնէ Պուրկազի կոչակար երիտասարդները այդ Դարգիճեանին ծուղակն իյնալէ, որ սարգի նման մարդուն տրեան մինչեւ վերջին կաթիլը ծծելու կաշխատի :

— Բուսճուրէն «չըլարեական կոչ» մը ստացած ենք, հոն կազմուած Հայ.Յեղ. Միութեան յանձնաժողովին կողմէ :

Յանձնաժողովը նամակով մը տեղեկութիւններ կուտայ իր կազմակերպութեան նպատակի մասին : Ամէն բանէ առաջ կը յայտնէ թէ բնաւ նոր կազմակերպութիւն մը ստեղծելու գիտաւորութեան չունի, իր բոլոր նպատակը լոկ յեղափոխութեան եւ միութեան երկու գաղափարներուն մէջ՝ պիտի մարմնաւորէ եւ երբէք չի պիտի միջամտէ անցեալին կուսակցական վէճերուն : Ամէն ջանք պիտի ընէ, որպէս զի մեր յեղ. ուժերը միութեան եւ գործակցական համերաշխութեան մէջ պահէ : Եւ երբ իրագործէ զայն, իր կոչումը կատարած նկատելով՝ պիտի դադարի գործելէ : Այս պատճառով ալ ինքզինքին «յանձնաժողով» անունը տուած է . . .

Սրտանց յաջողութիւն կը մաղթենք իր առաջադրած նպատակին :

— Կիմանանք թէ փակուած մասնաւոր վարժարանին յայտնի տնօրէնը «փուրտ ու փապուճ» վառնայէն փախեր է, անշուշտ այնքան խնամքով գաղտնի պահուած իր երկրորդ պատուիրակութեան համբաւաւոր ծրագրին հրապարակուիլը տեսնելով . . .

կազգուրուեցաւ, մանրամասն պատմեց ու նկարագրեց իր վիճակը, բայց միշտ յուզուած :

Վրատիքով զայրացաւ . . .

— Չօրպաճիներ՝ հարուստներ, անզգայ էչեր, բացաբանեց ան, սեղանին ուժով մը զարնելով եւ մտիկանութեան վառուած դէմքով — եւ դուն, Պրըչքով, գացեր անոնց ոտքին ես ինկեր որ քեզ մերժեն, եւ ուր բնակեալ չես գիտեր . . . Հայտէ՛ ինծի հետ առն կրթանք . . . տունս քու տունդ է . . .

— Շնորհակալ եմ, Վրատիքով, պատասխանեց Պրըչքով զգածուած . . .

— Դո՛ն, որ Սթրանճախ գլխուն մօտն էիր, երբ իր հոգին աւանդեց — ասի լաւ պիտեմ . . . հիմա դուն սով կը մեռնիս, եւ ես չը գիտեմ . . . Ա՛հ, ո՛ւր էր խելքդ . . .

Վրատիքով զգայուն նայուածք մը ձգեց Պրըչքովի վրայ . . .

Նիհար ու մոզոյն կ'ուր, հին, գրեթէ քրքրուած հազուադէպ, թրշուառ տեսքը, որ օւրիշներուն գթաւորութիւնը պիտի շարժէին, վրատիքովին վրայ ազդեց . . .

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Եստուրակիցի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խ Ո Ւ Ր Ք Ի Ա

Օսմանեան զօրքեր հաւած են Հին Սերպիա կարգը վերահաստատելու համար: Չորս վաշտ Անատոլիէն և հինգերորդ մը, որ անոնց պիտի հետեւի, բաւական կարեւոր ուժ մը կը ներկայացնեն, որով կարելի պիտի ըլլայ ամենէն յանդուգն ալպանացիներն իսկ հնազանդեցնել:

— Պոլսոյ Սերպիական դեսպան կրուիչին Պուլթանէն մասնաւոր ունկնդրութեան հրահրութիւնը բարեկամական յարաբերութեանց վերահաստատումին մէկ նշանը կը կարծուի:

— Ռուսիոյ և Թուրքիոյ միջեւ կայացած առեւտրական նոր դաշնագրութեանց բանակցութիւնները վերջ գտեր են, բայց բաւական պատուիրակը իր թուրք պաշտօնակիցներուն յայտարարերէ որ, այն առեւտրական պայմանագրէ, երբ թուրք կառավարութիւնը մարտային օրինագիր մը մշակէ, վերջ ապա համար վաճառականական գործառնութեանց ղէմ հանուած հազարամէկարգելքներուն Ռուսիոյ այս ընթացքը բոլոր պետութեանց հաւանութեան պիտի արժանանայ, որովհետեւ օսմանեան մաքառանքներու մէջ բաւական երկար առեւտրական յարաբերութիւն ունեցող այդ գծուարութիւնները այնքան բազմաթիւ և այնքան դառն ու յաճախակի տրտունջներու տեղի տուած են որ, օտար ներկայացուցիչները ստիպուած են շարունակ բողոքել:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ն

Պուլկարիոյ ռուս արքայական հիւրերուն ժամանումը պաշտօնապէս յայտարարուած է յունիս 27ին օրուան համար: Վառնայի տեղական իշխանութիւնները մեծ պատրաստութեան մէջ են: Թաղապետութիւնը յայտարարութեամբ մը կը հրահրէ քաղաքին գլխաւոր փողոցներուն վրայ բնակողները իրենց տունները կամ խանութները զարգարել ռուսական և պուլկարական դրօշակներով, առնուազն մէկ ու կէս մէթր երկայնութեամբ, մաքուր պահել փողոցները և պատշգամբները գորգով ծածկել հիւրերու անցած առեւտր:

— Պուլկարիոյ պատեղազմական և հանրային շինութեանց նախարարները Վառնա ժամանելու են, ինչպէս նաեւ ռուսական ընդհանուր հիւպատոս Պախմէթիէֆ:

— Սուլթանը չորս փաշաներ պիտի զրկէ եղբի Վառնա ռուսական հիւրերու այցելութեան առթիւ: Կըսուի թէ ռուս պատե-

ղազմական նաւախմբին հասած օրը Սուլթանը չորս տաճկական զրահաւորներ ալ պիտի զրկէ:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Սինկան Թուէն եկած հեռագիր մը կը ստիպէ կայսրուհին գերագոյն ժողովին յայտարարած է որ Չինաստանի պայագայ մայրաքաղաքը պիտի ըլլայ Քայ-Պունկ, Հոնանի մէջ, կայսրուհին կը մերժէ Փէրին՝ վերագառնալ դարանէ մը վախճալով:

— Սէուլի թերթերուն թղթակցները միահամուռ կը դատապարտեն Պրանսի միաօնարները և իրենց հետեւողները իրբնապատճառ վերջին խռովութեանց:

— Մանչուրիոյ վիճակը ըստ «Նիւ Եօրք Հերալտ»-ի այնքան վտանգաւոր է որ, ռուս իշխանութիւնները կ'ինքն ճամբայ հանած են, շատ մը ամուսնացած սպաներ արձակուրդ ստացան, որուն ժամանակը լրանալուն՝ կամ առանձին պիտի վերագառնան կամ բնաւ չպիտի վերագառնան: Գծին վրայ բնակող ռուս կիներուն աղքատարուեցաւ որ աւելի խոհեմութիւն պիտի ըլլայ այժմէն մեկնել:

— Նոյն գաւառին մէջ խռովութիւնները հետզհետէ կը սաստկանան: Մեծ թուով շինացիներ ամբողջ երկիրը սարսափի մէջ ձգած և Մուկոմանի շուրջը բոլոր դիւղերը ջնջած են: Իրենք շատ կանոնաւոր կազմակերպութիւն մը ունին և ռուսական ուժերը անբաւական են զանոնք զսպելու:

— Լուր կայ թէ Թուէնկ Թու Սեանկ մոնկոլական նոր արշաւանք մը կը կազմակերպէ: Իսկ Լան դուքսը և իշխան Թուան Թուրքաստան հասած են, իրենց աքսորաւայրը: Ռուսական դեսպանը հրահանգ ստացած է իսկոյն իմացնել իր կառավարութեան, եթէ աքսորեալները այդ տեղէն հեռանան:

— Չին բարենորոգիչ Քանկ Սու Ուէյ, որ 1898ին կայսրուհոյն հալածանքէն ազատած էր Անգլիացոց օգնութեամբ, և անկից ի վեր բազմաթիւ արկածներ անցուցած էր իր վրայ զրկուած ոճրագործներուն պատճառաւ, անգլիական թերթի մը մէջ երկու յօդուածներ հրատարակել է, ուր կըսէ թէ Չինաստանի բոլոր ազէտներուն պատճառը կայսրուհին է. ան է որ պօքսէրները կազմակերպեց, քրիստոնեաներու ջարդը հրամայեց, և իր գահընկեցութիւնը անհրաժեշտ է խաղաղութեան հաստատումին համար:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Թրանսվալէն քանի մը օրէ ի

վեր կարեւոր լուրեր չեն հաղորդուիր: Անգլիոյ մէջ խաղաղութեան ի նպաստ խօսիչ ուղող առեւտրականները կոչուած են կընդունուին ամբողջէն, Լիտուի մէջ ոստիկանութիւնը ստիպուեցաւ միջամտել խաղաղութեան ի նպաստ խօսող մը պաշտպանելու համար:

— Սուազիլանտի սահմանին մօտ խուժը մը պօքսէրներ շարաշար զոհ գացած են Սուազիներու վայրագութեանց, 70ի չափ պօքսէրներ քնանալու առեւտրական յարձակում կրեցին: Պօքսէրներէն ոմանք քաջաբար դիմադրեր են, բայց վերջ ի վերջոյ ամէնքն ալ սպաննուեր են: Սեւերը գրաւեր են անոնց ձիերը և պաշարները, իսկ դիակները թաղեր են յայտնի չընելու համար:

— Գերման ընկերվարականներու օրկան «Աւորվար» թերթը, Թրանսվալի վիճակին բարելաման լուրին առթիւ կը գրէ:

«Ժողովրդի մը հրէշային բնաւն շնորհիւ զարհուրելի ոճիրը այլեւս կատարուած է: Թրանսվալ անապատ մըն է միայն, բնակիչները մեծ մասամբ սպաննուած կամ հաշմուած են, ընտանիքները իրենց ազգականներէն արտաքսուած և բանտարանակներու մէջ անխուսափելի մահուան ենթարկուած են:

«Այսօր սակայն յաղթողները սպառումի վտանգին ենթարկուած են. ամէն ինչ ցոյց կուտայ որ Անգլիա խաղաղութեան պէտք ունի: Պէտք է ըսել որ, մենք կը փափագինք այս կռիւն վերջանալուն: Պետութիւնները միջամտելով աւելի Անգլիացոց օգնած պիտի ըլլան քան թէ պօքսէրներուն:

— Անգլիացիք կրկին գրաւեր են ամբողջութեամբ Պարհէլ-Կազէլը, զոր պայմանագրութեամբ Քօնկոի անկախ պետութեան յանձնած էին:

Յ Ր Ա Ն Ս Ա

Մահմուտ պէյ, Մատրիտի օսման դեսպանատան անպիտան քարտուղարը, կը գրէ «Քրօ Արմէնիա», որ քանի մը օր առաջ Քարթի կը գտնուէր, նախարարական հրամանով մը երկրէն դուրս վաճառուէր է: Անցեալ ուրբաթ իր բնակած պանդոկին մէջ ձեռքակալուելով զէպի Լոնտօն զրկուեր է: Այս անորակելի արարքին պատճառը Միւնիք պէյի գանգատներն եղեր են: Իր թէ Մահմուտ պէյ Միւնիք պէյի երեսին իջեր, մօրուքը քաշեր է, և անոր անձին զէպի գաւառը խորհուրդն ունեցեր է:

— Նոյն թերթէն կը տեղեկանանք որ, Շուէտի թրքակօն դեսպան Շէրիֆ փաշայի կողմէ «Ապտիւլ Համիտ» անունի չուեաներէն թարգմանչին զէմ բացուած դատը Սուլթանին աննպաստ արդիւնք մը տուեր է, Շուէտի ինը երգուեալները, ամենքն ալ ձեռնհաս անձեր, գրապէսներ, հրատարակագիրներ, դատապարտած են

Սուլթանը, յայտարարելով որ երբեք անոր պատիւին դպած չըլլար մարդ զայն ոճրագործ նկատելով և անոր անունին ամենէն ահաւոր անականները կ'ցելով:

Մ Օ Ն Թ Է Ն Է Կ Ր Օ

Քարատաղի սահմանագրի վրայ կուզինիէի մէջ, քրիստոնեայ ու ալպան ժողովրդին միջեւ մեծ գրգռում մը յառաջ եկեր է: 7 քրիստոնեայ սպաննուած եւ մէկը վիրաւորուած է: Սահմանագրի վրայ գտնուող բոլոր Քարատաղիները նոյնպէս գրգռուած են և կուզեն կուզինիէ երթալ, որպէս զի իրենց ազգակիցներուն օգնութեան հասնին:

Մօնթէնէկրօի Պօլսոյ գործակատարը, Պաքիչ, հրաման ստացաւ Ք. Գրան ուշադրութիւնը հրահրելու այս դէպքին վրայ, որպէս զի յատուշիկային գէշ հետեւանքներ տեղի չունենան:

Ա Ն Գ Լ Ի Ա

Բօրթաուտէն տրուած հեռագրի մը նայելով ծովակալ Ֆիչըր, Միջերկրականի անգլ. նաւատորմի իր հրամանատարը, ստիպողաբար խնդրած է յաճախակիներու և Քօնկո-Թօրթի յօններու առաքուելը: Անգլիացի մը Միջերկրականի նաւատորմի մասին գրելով կըսէ թէ «Պրանսայի սպայակոյտը այնքան համոզուած է մեր նաւատորմի անմիջական պատերազմի մը համար շատ չնչին պատրաստութեաներով, Թրանսայի սահմանական ծովային ռազմագիտութիւնը որոշած է պաշտպանողականի տեղ յարձակողական ծրագիր մշակել»:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Լէօ Պօլթըն. — Ուրախ ենք որ կը փափագինք ձեր թղթակցութիւնը վերսկսել, բայց մենք էլ մասնաւոր ըսուած լէլէնով չենք կրնար զբաղիլ: Եթէ դուք ալ մօտէն տեսած ըլլալու դժբաղդութիւնը ունենայիք, այդ շուրջին խօսքը անգամ չի պիտի ուզէիք ընել: Կը զարմանաք թէ «պոչուոր սուտեր» կը չինէ, ի հարկէ, Պուլկարիա նստող և Ամերիկայի վրայ հաշտուէն ինչ կը սպասէք:

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հանդիս աւսեայ, հոգաբարձական, գիտական և արտեսագիտական Հիմնադրութեան Գ. Մեմբերներու Հրատարակուած է Գրք թիւը, շահեկան բովանդակութեամբ: Տարեկան հրատարակելու 12 ֆր. դիմել հիմնադրին, 23 rue de la Collegiale PARIS

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՆ ԱՐԺՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լիցուէ այցեատման, հասցեատման, նամակագրուի, հարուանկան հրահրութիւն մահազգ:

Գրենքը յոյժ գլխաւորապէս լի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

Յ ԵՆ ԶՆՅՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՒՆԻՍԻ

Отговорникъ: Д-ръ М.Х.ЖРДИЧЪ ВАРГАНЪ